



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ**

ՈՐՈՇՈՒՄ N°-13Ն

**ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Դատական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել դատական ծառայողի վարքագծի կանոնները՝ համաձայն հավելվածի:

**Հայաստանի Հանրապետության
վճռաբեկ դատարանի նախագահ
Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2007թ. հոկտեմբերի 16
ք. Երևան

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՎԱՐՔԱԳԾԻ

1. Սույն կանոններով սահմանվում են դատական ծառայողի վարքագծի կանոնները ինչպես ի պաշտոնե գործելիս, այնպես էլ դրանից դուրս:

2. Դատական ծառայողի վարքագծի կանոնները, բարոյականության համընդհանուր սկզբունքների վրա հիմնված, դատական ծառայողների վարվելակերպի, վարքագծի և փոխհարաբերությունների առանձնահատկությունները կարգավորող նորմեր են:

3. Դատական ծառայողի վարքագծի կանոնները պարտադիր են բոլոր դատական ծառայողների համար: Դատական ծառայողի վարքագծի կանոնները պարտադիր են նաև տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց, ինչպես նաև կադրերի ռեզերվում ընդգրկված անձանց համար այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են նրանց նկատմամբ:

4. Դատական ծառայությունն իրականացնելիս դատական ծառայողի գործողությունները պետք է ուղղված լինեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակներին, և դրանց հասնելու միջոցները պետք է լինեն անհրաժեշտ, պիտանի և չափավոր:

5. Դատական ծառայողը պետք է ձգտի իր գործունեությամբ և վարքագծով բարձր պահել պետական՝ դատական իշխանության, պետական՝ դատական ծառայության համբավը, ապահովել դատարանի անկախությունն ու անկողմնակալությունը, ինչպես նաև նպաստել դատարանի և դատական ծառայության նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը: Վարքագծի կանոնների մեկնաբանությունն ու կիրառումը պետք է նպաստեն նշված նպատակի իրականացմանը:

6. Դատական ծառայողը պարտավոր է ինչպես անձամբ պահպանել վարքագծի կանոնները, այնպես էլ հետամուտ լինել իր գործընկերների կողմից դրանց պահպանմանը:

7. Դատական ծառայողը պետք է զերծ մնա այնպիսի գործողություններից, որոնք կարող են հեղինակագրկել Հայաստանի Հանրապետության պետական իշխանությունը և պետական մարմիններին կամ վտանգել պետական իշխանության իրականացումը:

8. Դատական ծառայողը ծառայողական և արտածառայական հարաբերություններում պետք է զերծ մնա այնպիսի վարքագծի դրսևորումից, որը կվտանգի դատական իշխանությունը, կստեղծի հնարավորություն դատավորի վարքագծի կանոնների խախտման կամ կառաջացնի նման տպավորություն:

9. Դատական ծառայողը ծառայողական և արտածառայական հարաբերություններում պարտավոր է ղեկավարվել մարդասիրության, արդարության և ազնվության սկզբունքների վրա հիմնված բարոյական նորմերով, հարգել մարդու արժանապատվությունը, անհարկի չընդգծել իր պաշտոնական դիրքը, բացառել ցանկացած տիպի ոչ պատշաճ վարքագծի դրսևորումներ կոլեկտիվի անդամների, դատարան մուտք գործած անձանց հետ և այլ շփումներում:

10. Դատական ծառայողը դատավորի հետ շփվելիս կամ դատական իշխանության մասին խոսելիս իր վարքագծով, դիմելաձևով պետք է արտացոլի մեծ հարգանք դատական իշխանության կրողների նկատմամբ:

11. Դատական ծառայողն իր լիազորություններն իրականացնելիս պարտավոր է գործել այնպես, որպեսզի առանց իր լիազորությունների կատարմանը վնասելու՝ առավել սեղմ ժամկետում, առավել բարենպաստ արդյունքի հասնի, ապահովի իր տնօրինմանը հանձնված միջոցների առավել արդյունավետ օգտագործումը:

12. Ծառայողական պարտականություններն իրականացնելիս դատական ծառայողը պետք է գրավի ակտիվ դիրք, բարձր գնահատի ծառայողական շահը, առաջարկություններ ներկայացնի մասնագիտական ծառայողական գործունեության կատարելագործման ուղղությամբ:

13. Դատական ծառայողն իր քաղաքական գսավածության պարտականությունն իրականացնելիս պետք է իր ամենօրյա գործառույթներում և շփումներում լինի քաղաքականապես չեզոք, զերծ մնա այնպիսի գործողություններից

և շփումներից, որոնք կարող են ստեղծել քաղաքական կողմնապահության տպավորություն:

14. Դատական ծառայողն ի պաշտոնե գործելիս, այնպես էլ դրանից դուրս, պարտավոր է համապատասխան իրավասություն չունեցող անձին չհրապարակել աշխատանքի ընթացքում ձեռք բերած մարդու անձնական և ընտանեկան, պետական, ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնի, ինչպես նաև ոչ գաղտնի տեղեկատվությունը, որոնք կարող են վնաս հասցնել մարդկանց կյանքին և առողջությանը, հեղինակությանը և գործարար համբավին՝ անկախ այդ տեղեկատվության պաշտոնական, թե ոչ պաշտոնական աղբյուրից ստացված լինելու հանգամանքից: Սույն կանոնը չի վերաբերում օրենքով սահմանված կարգով հայցվող տեղեկատվության և դրա տրամադրման կարգին:

15. Դատական ծառայողը դատավարության մասնակիցների և այլ անձանց հետ շփումներում որոշակի կամ հնարավոր դատական վեճերով (գործերով) չպետք է նրանց ուղղորդի անձնավորված փաստաբաններ և ներկայացուցիչներ ունենալուն, չպետք է ընդունի որևէ նվեր, կամ այլ շահավետ առաջարկ:

16. Դատական ծառայողը պարտավոր է պարբերաբար զբաղվել իր մասնագիտական գիտելիքների կատարելագործմամբ, իրազեկ լինել օրենսդրական փոփոխություններին, իրավական մեկնաբանություններին, առանց իր լիազորությունների կատարմանը վնասելու՝ մասնագիտական աջակցություն ցուցաբերել գործընկերներին:

17. Դատական ծառայողը պարտավոր է չօգտագործել իր պաշտոնական դիրքը կամ դատական իշխանության հեղինակությունն իր կամ այլ անձանց համար արտոնություններ, բացառություններ և նպաստավոր այլ պայմաններ ստեղծելու համար:

18. Դատական ծառայողը պարտավոր է պահպանել բարոյական նորմերով սահմանված էթիկայի այլ կանոններ: